ՀՀ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ-ՄՐՑԱԽԱՂԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ

Երիտասարդների խոցելիության նվազման և մարդկանց թրաֆիքինգի ու շահագործման վտանգների մասին իրազեկվածության մակարդակի բարձրացման համար Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը իրականացնում է «Թրաֆիքինգի դեմ պայքար ուսանողական մրցադաշտում» թեմայով գիտելիքների ծրագիր-մրցախաղ:

Ծրագրի կանցկացվի երկու փուլով՝ նախատեղեկատվական և մրցակցային, որին իրենց մասնակցությունը կարող են ունենալ հայաստանյան բուհերի ուսանողները:

Ծրագրի առաջին՝ նախատեղեկատվական փուլում մասնակիցների համար կկազմակերպվի դասընթացներ, որոնք կվարեն թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի փորձագետներ, որոնք կփոխանցեն անհրաժեշտ տեղեկատվություն և կուղղորդեն խաղի մասնակիցներին հարցերի ճիշտ պատասխանները գտնելու հարցում

Ծրագրի երկրորդ՝ մրցակցային փուլում կձևավորվեն 3 հոգուց բաղկացած 5 թիմ, ովքեր իրենց գիտելիքներով կմրցեն ինտերակտիվ համակարգչային Brain Ring մրցախաղում: Նվազագույն ժամանակում առավելագույն միավորներ կուտակած առաջին երեք թիմերը կարժանանան մրցանակների:

Դասընթացների և խաղի անցկացումը բաց է և հասանելի բոլոր ցանկացողների համար: Գրանցվելու համար անհրաժեշտ է անցնել հետևյալ հղումով՝
https://docs.google.com/forms/d/e/1FAIpQLSehCMnm5yJMmvVAo4dYRWIbcqlU1TyR_zSyKPCbpPsMtvIAsw/viewform:

Ծրագրի մասնակցության հայտերը ընդունվում են մինչև դեկտեմբերի 14-ը:

Ծրագրի նախատեղեկատվական փուլը տեղի կունենա, դեկտեմբերի 17-ին, ժամը 16:00-ին, իսկ մրցակցային փուլը՝ դեկտեմբերի 18-ին, ժամը 16:00-ին, ԷՕՆ-ում (Տերյան 3):